ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ

ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆԸ

«25» փետրվարի 2019 թվականի № 46-Ա

ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՅԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի 51-րդ հոդվածի, 54-րդ հոդվածի, 55-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով, հիմք ընդունելով հանքավայրի շահագործման նախագծի 2018 թվականի դեկտեմբերի 28-ի ՀՀ բնապահպանության նախարարության՝ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության» թիվ ԲՓ 115 և 2018 թվականի նոյեմբերի 22-ի ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության՝ «Արտադրական վտանգավոր օբյեկտի նախագծային փաստաթղթերի տեխնիկական անվտանգության» թիվ 2861 փորձաքննությունների դրական եզրակացությունները, հաշվի առնելով «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ի 2018 թվականի հոկտեմբերի 29-ի թիվ Ֆ-312/18 գրությունը, «ՔԱԼՈՅԱՆ» ՍՊ ընկերության 2018 թվականի հոկտեմբերի 25-ի թիվ 11 գրությունը և Ընդերքի գործակալության պետի ժամանակավոր պաշտոնակատարի զեկուցագիրը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. «ՔԱԼՈՅԱՆ» ՍՊ ընկերությանը (այսուհետ՝ ընկերություն) 28.28 տարի ժամկետով տրամադրել օգտակար հանածոյի արդյունահանման և (կամ) ընդերքօգտագործման թափոնների վերամշակման թիվ ՇԱԹ-29/598 թույլտվությունը՝ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ձորագյուղի (Ծակքարի) պեռլիտային ավազի հանքավայրի 2-րդ տեղամասի՝ 1.X=4449123 Y=8516860 2.X=4449145 Y=8516793 3.X=4449189 Y=8516777 4.X=4449198 Y=8516758 5.X=4449198 Y=8516693 6.X=4449307 Y=8516707 7.X=4449308 Y=8516892 8.X=4449234 Y=8516903 9.X=4449206 Y=8516850 (տրված են WGS-84 (ՎԻ ՋԻ ԷՍ-84) (ARMREF 02) ազգային գեոդեզիական կոորդինատային համակարգով) կոորդինատներով եզրագծված տեղամասում արդյունահանում կատարելու համար, հատկացնելով՝ 227340 մ³ մարվող պաշար և լեռնահատկացման թիվ Լ-598 ակտը՝ 1.X=4449147 Y=8516787, 2.X=4449187 Y=8516777, 3.X=4449197 Y=8516760, 4.X=4449198 Y=8516693, 5.X=4449308 Y=8516707, 6.X=4449308 Y=8516895, 7.X=4449234 Y=8516904 8.X=4449206 Y=8516850, 9.X=4449122 Y=8516860 (տրված են WGS-84 (ՎԻ ՋԻ ԷՍ-84) (ARMREF 02)

ազգային գեոդեզիական կոորդինատային համակարգով) կոորդինատներով եզրագծված 2.56 հա տարածքով:

2.Հանքի տարեկան արտադրողականությունը սահմանել՝ 8039 մ³ մարվող պաշար:

3.Կնքել ընդերքի տեղամասի օգտակար հանածոյի արդյունահանման և (կամ) ընդերքօգտագործման թափոնների վերամշակման նպատակով ընդերքօգտագործման թիվ Պ -598 պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր):

4. Ընդերքի գործակալության պետին՝

1) ծանուցել ընկերությանը՝ ոչ ուշ քան 5 աշխատանքային օրվա ընթացքում վճարել ընդերքօգտագործման իրավունքի տրամադրման պետական տուրքը.

2) հրավիրել ընկերությանը 10-օրյա ժամկետում վավերացնելու (ստորագրելու և կնքելու) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ձորագյուղի (Ծակքարի) պեռլիտային ավազի հանքավայրի 2-րդ տեղամասի օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով և (կամ) ընդերքօգտագործման թափոնների վերամշակման ընդերքօգտագործման թիվ Պ- 598 պայմանագիրը.

3) ընկերության կողմից պայմանագիրը վավերացվելուց (ստորագրելուց և կնքելուց) հետո, 10 օրվա ընթացքում ընկերությանը տրամադրել օգտակար հանածոների արդյունահանման իրավունքը հավաստող փաստաթղթերի փաթեթը.

4) ծանուցել ընկերությանը, որ սահմանված ժամկետներում պայմանագիրն իր կողմից չվավերացնելու և ընդերքօգտագործման իրավունքի փաթեթը չստանալու դեպքում, արդյունահանման իրավունք հայցելու դիմումը բավարարելու վերաբերյալ սույն հրամանը կճանաչվի ուժը կորցրած.

5) ապահովել համապատասխան գրառումների կատարումը օգտակար հանածոների արդյունահանման իրավունքի հաշվառման գրանցամատյանում:

5. «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ի տնօրենին – ապահովել ֆոնդային փաստաթղթերում սույն հրամանից բխող համապատասխան գրառումների կատարումը՝ Ընդերքի գործակալության կողմից փաստաթղթերի փաթեթի ստացումից եռօրյա ժամկետում:

6. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով՝ ուժի մեջ մտնելու օրվանից 2 ամսվա ընթացքում:

7. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել՝ ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի տեղակալ Տիգրան Արզումանյանին:

Պաշտոնակատար

Գարեգին Բաղրամյան

2/25/2019

X

VERIFIED OCSP 25-Feb-19 19:05:54 GMT+4

Signed by: BAGHRAMYAN GAREGIN 3207770118